ՄԵՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԻՆՏԵՆՍԻՎԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻ

Շուկայական հարաբերությունների պայմաններում տնտեսական, քաղաքական և սոցիալական առաջնակարգ նշանակություն ունի գիտատեխնիկական առաջընթացի զարգացման, հետևողական ինտենսիվացման գործընթացի հիման վրա՝ գյուղատնտեսական արտադրանքի ավելացման, դրա որակի բարելավման և արտադրության արդյունավետության բարձրացման հիմնահարցերի լուծումը:

Փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացումը, տեխնիկական վերազինումը, արտադրության հետագա զարգացման տեմպերը վճռորոշ գործոններ են արտադրության արդյունավետության բարձրացման գործում: Ուսումնասիրվող մարզի հողային ռեսուրսները սահմանափակ են, հետևապես, անհրաժեշտ է հասնել նրան, որպեսզի տարեցտարի հողի յուրաքանչյուր հեկտարից ստացվի էլ ավելի բարձրորակ և ցածր ինքնարժեքով արտադրանք:

Գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության բարձրացումը ընդհանրապես նախատեսում է համընդգրկուն խնդիրների լուծում՝ կապված արտադրական գործընթացների կազմակերպման ու զարգացման հետ:

Գիտատեխնիկական առաջընթացի արդյունքների ներդնումը արտադրության ոլորտում հնարավորություն կընձեռի լուծելու մարզի համար կարևոր սոցիալ-տնտեսական խնդիրներից մեկը՝ բնակչության նյութական բարեկեցության բարձրացումը:

Արմավիրի մարզի գյուղատնտեսական արտադրության արդյունավետության մակարդակը բավականին ցածր է: Առկա հողային, ջրային և աշխատանքային ներուժն օգտագործվում է անբավարար: Ուստի, առաջնահերթ խնդիրներից է ամբողջությամբ վերցրած գյուղատնտեսական արտադրության զարգացման, տնտեսությունների արտադրության ու եկամուտների ծավալների մեծացմանն ուղղված քաղաքականության իրականացումը՝ հանրապետությունում առկա հողային, ջրային և նյութատեխնիկական ռեսուրսների ու աշխատուժի ինտենսիվ օգտագործման և գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը բարձրացնող գյուղատնտեսության ինտենսիվ վարման արդյունավետ եղանակների կիրառման միջոցով:

Այստեղ եզրակացությունը միանշանակ է. Արմավիրի մարզի ներկայիս տարածքում և նոր արտադրահարաբերությունների զարգացման պայմաններում գյուղատնտեսության զարգացումը հիմնականում կարող է ընթանալ ինտենսիվ ուղիով՝ միայն հիմնական միջոցների և աշխատանքի մեծածավալ ներդրումների միջոցով:

Հաշվի առնելով մարզի սոցիալական և տնտեսական զարգացման հիմնահարցերի լուծման գործում արտադրության ինտենսիվացման վճռորոշ դերը՝ անհրաժեշտ է սահմանել դրա իրականացման գլխավոր ուղղությունները և տալ այն կոնկրետ խնդիրների լուծումները, որոնք հնարավորություն կտան զարգացնելու ագրարային հատվածը:

Արտադրության ինտենսիվ գործընթացները նոյմալ հուն մտնելուց հետո արդեն առաջ կգա մարզի գյուղատնտեսական արտադրության խոր ինտենսիվացման խնդիրը, խոր, որովհետև արդի պայմաններում, հեռանկարում առավել ևս, ինտենսիվացումը կպահանջի արմատական միջոցառումների համալիր կիրառում:

Անհրաժեշտ է նշել, որ անբավարար է օգտագործվում ինչպես հանրապետության, այնպես էլ ուսումնասիրվող մարզի գյուղատնտեսության ներուժը, որի ճյուղերը զարգանում են ոչ ինտենսիվ եղանակով: Անցած տասնհինգ տարիներին տարբեր գործոնների ազդեցությամբ լուրջ փոփոխությունների է ենթարկվել ցանքատարածությունների կառուցվածքը:

Կարտոֆիլագործության և խաղողագործության հետագա զարգացման համար մարզն ունի մեծ հնարավորություններ հատկապես արտահանման ուղղությամբ:

Համախառն բերքի ավելացման կարևոր գործոն են վերամշակող կազմակերպությունների ընդլայնումը և թարմ բանջարեղենի արտահանման խթանումը:

Վերջին 5-6 տարիների ընթացքում մարզում արագ զարգանում է ձկնաբուծությունը:

Գյուղատնտեսական մասնավոր հատվածի զարգացման գործում եղած խոչընդոտների վերացման համար անհրաժեշտ են գյուղատնտեսության կառուցվածքային վերափոխման համապատասխան աշխատանքներ և որոշակի ֆինանսավորում, ինչպես նաև վարկային ծրագրերի ու շուկայական ենթակառուցվածքների զարգացման միջին և երկարաժամկետ ֆինանսավորում:

Անհրաժեշտ և նպատակահարմար է իրականացնել կարճաժամկետ ներդրումային ծրագրեր, որոնք կուրվագծեն ենթակառուցվածքների զարգացման շրջանակները, և կմշակվեն որոշ այլընտրանքային մոտեցումներ՝ հետագա առավել ծավալուն ներդրումների հստակեցման նպատակով: Մեր կարծիքով հանրապետությունում առկա նոր արտադրահարաբերությունների պայմաններում, երբ զարգանում են սեփականության բազմազան ձևերը, ձևավորվում ու զարգանում են շուկայական հարաբերությունները, այդ պայմանների համար գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացում ասելով՝ վերջնականորեն հասկանում ենք կազմակերպչական-տնտեսական միջոցառումների մի համալիր, որի նպատակն է միավոր տարածությունից աշխատանքային և նյութական միջոցների նվազագույն ծախսումներով առավելագույն քանակի ու բարձրորակ արտադրանքի ստացումը:

Ինչպես ներկայումս, այնպես էլ առաջիկայում կարևոր խնդիր է համարվելու, նախատեսված ֆիզիոլոգիական նորմաներից ելնելով, սեփական արտադրության հաշվին հանրապետության բնակչության պահանջմունքների բավարարումը ոչ միայն կարտոֆիլով, բանջարեղենով, այլ նաև խաղողով, պտղով, մսամթերքով, կաթնամթերքով, ձվով:

Մարզի գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման գործում կարևոր խնդիր է նաև հողի բերրիության բարձրացումը, նրա ավելի արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև հանքային պարարտանյութերի, բուժանյութերի և ոռոգման ջրի ապահովման գործընթացների բարելավումը: ՄԵԾ նշանակություն ունի նաև գյուղատնտեսական ճյուղերի ճիշտ և ռացիոնալ տեղաբաշխման ու մասնագիտացման աշխատանքների կազմակերպումը մարզում:

Հանրապետության գյուղատնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունի հողաբարելավման համալիր միջոցառումների իրականացումը, որոնց կարևոր բաղադրիչներն են ոռոգման համակարգերի և հողերի մելիորատիվ վիճակի բարելավման միջոցառումները: Վերջիններս կուղղվեն մի շարք վարկային և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի իրականացմանը, մասնավորապես.

- ոռոգման համակարգի կառավարման կատարելագործմանը և տեխնիկական վիճակի բարելավմանը, մեխանիկական ոռոգումն ինքնահոսի փոխարինմանը,
- ոռոգման համակարգերի զարգացման վարկային ծրագրերի երկրորդ փուլի իրականացմանը, որն ուղղված կլինի ոռոգման, դրենաժային համակարգերի բարելավմանը,
- մարզի երկրորդային աղակալված հողերի արմատական բարելավման ծրագրի իրականացմանը: Ծրագրի իրականացման արդյունքում հանրապետության շուրջ 80 հազ. հա հողատարածքներում կկարգավորվեն գրունտային ջրերի մակարդակները, կկանխար-

գելվեն երկրորդային աղակալման գործընթացները, կապահովվի գյուղատնտեսական մշակաբույսերի կայուն, որը որոշ չափով կնպաստի աղքատության կրճատմանը:

Միջազգային շուկայում, հատկապես Եվրամիության երկրներում, տարեցտարի աճում է ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված օրգանական պարենամթերքի պահանջարկը: Հայաստանում առկա են որոշակի նախապայմաններ օրգանական սննդամթերքի արտադրության զարգացման համար: Այս դեպքում առանձին տնտեսություններ պետք է ընտրություն կատարեն օրգանական գյուղատնտեսության և քիմիացման միջոցով ինտենսիվացման միջև:

Օրգանական գյուղատնտեսական արտադրությունը հիմնված է կայուն և հավասարակշռված ագրոէկոհամակարգերի ստեղծման, պահպանության, աղտոտող տեխնոլոգիաների օգտագործման բացառման, քիմիական նյութերի կիրառման խիստ սահմանափակման, բույսերի տեսակների, ինչպես նաև կենդանիների ցեղերի կենսաբազմազանության ավելացման և հողի բնական բերրիության բարձրացման, արդյունավետ ցանքաշրջանառության, օրգանական պարարտանյութերի կիրառման, վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի կենսաբանական և ֆիզիկական ու այլ մեթոդներով պայքարի կազմակերպման վրա:

Բուսաբուծության ճյուղի զարգացման գերակայություններ պետք է համարվեն.

- ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգերի ներդրման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացումը և միավոր արտադրանքի հաշվով արտադրական ծախսերի կրճատումը,
- ցանքաշրջանառության կառուցվածքի բարելավումը և միավոր տարածությունից ստացվող եկամտի ավելացումը,
- բարձր եկամտաբերություն ապահովող մշակաբույսերի ներդրումը, մշակության ագրոտեխնիկայի յուրացումը,
- դաշտային կերարտադրության արդյունավետության բարձրացումը և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացումը,
- բազմամյա տնկարկների տարածության ավելացումը մինչև 72.0հազ. հա, որից պտղատու այգիներ՝ 45.6 և խաղողինը՝ 26.4 հազ. հա:

Շուկայական տնտեսության պայմաններում, ճիշտ է, նվազում է պետության դերը, սակայն առանց նրա ուղղակի կամ անուղղակի միջամտության ազդեցության հնարավոր չէ արդյունավետ կարգավորել գյուղատնտեսության ինտենսիվացմանն առնչվող հարցերը: Մասնավորապես պետական բյուջեից կամ միջազգային կազմակերպություններից ստացվող դրամական միջոցների մի մասն ուղղվում է հողերի վերականգնմանը և դրանց պահպանմանը: 2006 թվականին այդ ուղղությամբ ծախսված դրամական միջոցների կառուցվածքը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1-ում արտացոլված տվյալների վերլուծությունից կարող ենք նշել, որ հողերի պահպանության և վերականգնման միջոցառումների համար ծախսվել է 238 մլն 887 հազար դրամ, որից 46.2%-ը ծախսվել է ոռոգման, 30.4%-ը պարարտանյութերի ձեռքբերման, 23.4%-ը այլ միջոցառումների համար:

Աղյուսակ 1

Հողերի պահպանության և վերականգնման միջոցառումները, 2006թ.

Միջոցառումների անվանումը			Ընդամենը
Ագրոտեխնիկական և հիդրոտեխնիկական միջոցառումներ, հա	ոռոգում		110444.4
	չորացում		-
	հակասելավային և հողատարման այլ միջոցառումներ		205.0
	հողի մաքրում թփուտներից, քարերից և թափոններից		1700.3
	հողերի վերականգնում		1669.3
	հանված է հողի բերրի շերտը		6.55
	հողերի աղազերծում		-
	այլ միջոցառումներ		792.0
Քիմիական և կենսաբանական միջոցառումներ, հա	պարարտանյութերի օգտագործում	օրգանական	70000.0
		հանքային	2729.4
	թունաքիմիկատների օգտագործում		9.0
	այլ միջոցառումներ		1300.0
Հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման համար կատարված ծախսեր, հազ. դրամ	հողատարման կանխման հիդրոտեխնիկական կառուցվածքներ		-
	հակասելավային կառուցվածքներ		31.5
	դարավանդների ստեղծում		-
	դաշտապաշտպանական անտառաշերտի հիմնում		-
	հողերի վերականգնում		-
	այլ միջոցառումներ		50000.0

Գյուղատնտեսության ինտենսիվացման արդյունավետության բարձրացման ուղիները.

- Գիտատեխնիկական առաջընթացի զարգացում գյուղատնտեսությունում:
- Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդում:
- Կապիտալ ներդրումների և ինվեստիցիաների աճը գյուղատնտեսական արտադրությունում:
- Արտադրական պրոցեսների մակարդակի բարձրացում:
- Գյուղատնտեսության քիմիացման զարգացում (հանքային պարարտանյութերի օգտագործում և բույսերի պաշտպանության քիմիական միջոցների կիրառում):
- Գյուղատնտեսության մելիորացիա (ոռոգման զարգացում, չորացում, կուլտուր-տեխնիկական աշխատանքներ):
- Մասնագիտական կադրերի պատրաստման կատարելագործում գյուղատնտեսության ոլորտի համար:

Այսպիսով, գյուղացիական և մյուս տնտեսությունների առջև ծառացել է անհետաձգելի խնդիր. տեխնոլոգիաների, գիտության և առաջավոր փորձի նվաճումների ներդրման հիման վրա և որոշ կապիտալ ներդրումների շնորհիվ իրականացնել տնտեսության համակողմանի ինտենսիվացում: